ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2021 թվականի N 292 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱ-ԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1708-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիա-ների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման N 2 հավելվածի՝

ա. 3-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը «և ավելի համաֆինանսավորվող հայտերը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ համայնքների գլխավոր հատակագծերի մշակման հայտերի)» բառերով,

բ. 4-րդ կետը «ձևերին համապատասխան» բառերից հետո լրացնել «ու ըստ անհրաժեշտության ոլորտային լրացուցիչ պայմանների ներառմամբ» բառերով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«2021 թվականին սուբվենցիայի հայտը տեխնիկական բնութագրերի հետ միասին ներկայացվում են համապատասխան մարզպետարան՝ մինչև 2021 թվականի մարտի 10-ը:»,

գ. 5-րդ կետը «փետրվարի 5-ը» բառերից հետո լրացնել «, իսկ 2021 թվականին՝ մինչև մարտի 15-ը» բառերով,

դ. 10-րդ կետում «2020 թվականին սուբվենցիայի ամբողջական փաթեթները ներկայացվում են համապատասխան մարզպետարաններ մինչև 2020 թվականի մայիսի 26-ը» բառերը փոխարինել «2021 թվականին սուբվենցիայի ամբողջական փաթեթները ներկայացվում են համապատասխան մարզպետարաններ մինչև 2021 թվականի հունիսի 5-ը» բառերով,

ե. 11-րդ կետում «իսկ 2020 թվականին սուբվենցիայի ամբողջական փաթեթները նախարարություն են ներկայացվում մինչև 2020 թվականի հունիսի 1-ը» բառերը փոխարինել «իսկ 2021 թվականին սուբվենցիայի ամբողջական փաթեթները նախարարություն են ներկայացվում մինչև 2021 թվականի հունիսի 10-ը:» բառերով,

զ. 12-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը «ավագանու որոշումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն համայնքների, որտեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավագանի չի ձևավորվել:» բառերով,

է. 17-րդ կետում «2020 թվականին հանձնաժողովի նիստերում սուբվենցիայի հայտերը քննարկվում են մինչև 2020 թվականի հուլիսի 20-ը» բառերը փոխարինել «2021 թվականին հանձնաժողովի նիստերում սուբվենցիայի հայտերը քննարկվում են մինչև 2021 թվականի հուլիսի 30-ը» բառերով,

ը. ուժը կորցրած ճանաչել 22.1-ին, 22.2-րդ և 22.3-րդ կետերը,

թ. 24-րդ կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ծրագրի ոլորտը	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիայի չափաբաժինը, տոկոս			
	մայրաքաղաքից մինչև 60 կմ հեռավորություն ունեցող բնակավայր	մայրաքաղաքից 60 կմ-ից ավելի և մարզկենտրոնից մինչև 30 կմ հեռավորություն ունեցող բնակավայր	մայրաքաղաքից 100 կմ-ից ավելի հեռավորություն ունեցող բնակավայր	սահմանամերձ և (կամ) բարձր լեռնային բնակավայր
Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	55	60	65	70
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	55	60	65	70
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում սալարկմամբ, խճապատմամբ	55	60	65	70
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	50	55	60	65
Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	50	55	60	65
Բնակավայրերի գազաֆիկացում	50	55	60	65
Մանկապարտեզների կառուցում, վերակառուցում/նորոգում	50	55	60	65
Մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում	40	45	50	55
Աղբավայրերի բարեկարգում կամ փակում	40	45	50	55
Համայնքների գլխավոր հատակագծերի մշակում	40	45	50	55
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում	35	40	45	50
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում ասֆալտապատմամբ	30	35	40	45
Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	30	35	40	45
Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում	30	35	40	45

»,

ժ. հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 24.2-րդ կետով.

«24.2 Համայնքների գլխավոր հատակագիծ չունեցող համայնքների դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը նվազում է 5 տոկոսով, բացառությամբ այն համայնքների, որոնք ընթացիկ տարում ներկայացրել են գլխավոր հատակագծի մշակման սուբվենցիոն հայտ, ինչպես նաև այն համայնքների, որոնց գլխավոր հատակագծերը նախատեսվում է մշակել ընթացիկ տարում այլ ծրագրերի շրջանակներում:».

2) որոշման N 3 հավելվածի՝

ա. «Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք/ բնակավայրի» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	*Այո/ ոչ,* *Այո-ի դեպքում նշել հաստատման ամսաթիվը*

»,

բ. «Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները» սյունակում «(այդ թվում՝ շինարարական աշխատանքների, ասֆալտապատման, խողովակների, հաղորդալարերի, լուսատուների (ԼԵԴ), նկարագրություններն ու ծավալները (չափերը)» բառերը փոխարինել «(այդ թվում՝ շինարարական աշխատանքների ծավալները, կառուցվող և նորոգվող փողոցների ու մայթերի երկարություններն ու մակերեսները, ջրամատակարարման, կոյուղու, ոռոգման և գազի խողովակների երկարությունները և նկարագրությունները, լուսավորության հաղորդալարերի երկարությունները, հենասյուների քանակը, լուսատուների (ԼԵԴ) նկարագրությունները» բառերով,

գ. «Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա» սյունակում «ասֆալտապատման» բառը փոխարինել «փողոցների կառուցման և նորոգման» բառերով,

դ. «Ծրագրի ընդհանուր բյուջեն» սյունակը «..... դրամ (100%),» բառերից հետո լրացնել «Մինչև ընթացիկ տարվա վերջ չավարտվող ծրագրերի դեպքում՝ հստակ առանձնացնել ընթացիկ տարվա ծախսերը և հաջորդ տարվա ծախսերը» բառերով.

3) որոշման N 4 հավելվածի՝

ա. «Մշտադիտարկումը և գնահատումը» այունակի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մարզպետարանն իրականացնում է յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրի մասով համայնքի և կապալառուի կամ մատակարարի միջև կնքված պայմանագրերի հավաքագրում և մշտադիտարկում»,

բ. «Մշտադիտարկումը և գնահատումը» այունակի 4-րդ կետում «նախարարություն» բառը փոխարինել «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)» բառերով,

գ. «Մշտադիտարկումը և գնահատումը» այունակի 13-րդ կետը «արձանագրությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար համայնքի և կապալառուի կամ մատակարարի միջև կնքված պայմանագրերը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

04.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ